ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2020/24-1

ք. Երևան «18» 08 2020թ.

Առողջապահության նախարարությունը դեմս գլխավոր քարտուղար Լ.Քոչարյանի, որը գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Մ.Լ.Ն ֆարմ» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Հ.Վասիլյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **1,443,289,500 (մեկ միլիարդ չորս հարյուր քառասուներեք միլիոն երկու հարյուր ութսունինը հազար հինգ հարյուր)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է

տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ֆինանսական միջոցներ հատկացնելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագրի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Առողջապահության նախարարություն	«Մ.Լ.Ն ֆարմ» ՍՊԸ
ք. Երևան, Կառավարության շենք N 3	Ք.Երևան, Մ.Մաշտոցի 2, տ.39
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011105237	Հ/Հ 1930000861840100
ՀՎՀՀ 02507171	ՀՎՀՀ 02567316
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 18 » 08 2020թ. կնքված
«ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2020/24-1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի											
Հ/Հ	միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	Մատակարարման		
									հասցեն	Ենթակա առավելագույն քանակը	Ժամկետը*
1	33611310/504	Ուլտրակարճ ազդեցության ինսուլինների անալոգներ 100 ՄՄ/մլ 3 մլ (փամփուշտներ)	Հումալոգ Լիլի Ֆրանս Ս.Ա.Ս	Ուլտրակարճ ազդեցության ինսուլինների անալոգներ 100 ՄՄ/մլ 3 մլ, լուծույթ ներարկման, փամփուշտներ նախատեսված 2 տարեկան և 2 տարեկանից բարձր երեխաների համար	հատ	4950	159,885,000	32 300	ք. Երևան, Տիտոգրադյան 14/10	32 300	2020-2023թթ.
2	33611310/505	Ուլտրակարճ ազդեցության ինսուլինների անալոգներ 100 ՄՄ/մլ 3 մլ (փամփուշտներ)	Հումալոգ Լիլի Ֆրանս Ս.Ա.Ս	Ուլտրակարճ ազդեցության ինսուլինների անալոգներ 100 ՄՄ/մլ 3 մլ, լուծույթ ներարկման, փամփուշտներ, նախատեսված 2 տարեկան և 2 տարեկանից բարձր երեխաների համար	հատ	4950	511,830,000	103 400		103 400	
3	33611310/506	Երկարատև ազդեցության ինսուլինների անալոգներ 100 ՄՄ/մլ 3 մլ	Աբասագլար Լիլի Ֆրանս Ս.Ա.Ս	Երկարատև ազդեցության ինսուլինների անալոգներ 100 ՄՄ/մլ 3 մլ, լուծույթ ներարկման, փամփուշտներ, 2 տարեկան և 2 տարեկանից բարձր երեխաների համար	հատ	5531	771,574,500	139 500		139 500	

Դիաբետով երեխաների բուժումն և հսկողությունը լիարժեք կազմակերպելու համար Մատակարարը պայմանագրի շրջանակներում պարտավորվում է անվճար ապահովել՝

1-ին չափաբաժնի համար

- 2020թ-ին 250 հատ 0,5 Մ քայլով գրիչ-ներարկիչներ, Գրիչ-ներարկիչների ասեղներ, 4-5մմ երկարությամբ՝ 2020թ-ին 104 000 հատ քանակով,
- 2021թ-ին 30 հատ 0,5 Մ քայլով գրիչ-ներարկիչներ, Գրիչ-ներարկիչների ասեղներ, 4-5մմ երկարությամբ՝ 2021թ-ին 250 000 հատ քանակով,
- 2022թ-ին 35 հատ 0,5 Մ քայլով գրիչ-ներարկիչներ,Գրիչ-ներարկիչների ասեղներ, 4-5մմ երկարությամբ՝ 2022թ-ին 280 000 հատ քանակով,
- 2023թ-ին 40 հատ 0,5 Մ քայլով գրիչ-ներարկիչներ, Գրիչ-ներարկիչների ասեղներ, 4-5մմ երկարությամբ՝ 2021թ-ին 304 000 հատ քանակով,

2-րդ չափաբաժնի համար փամփուշտների դեպքում՝

- 2020թ-ին 1000 հատ գրիչ-ներարկիչներ, Գրիչ-ներարկիչների ասեղներ, 8 մմ երկարությամբ՝ 2020թ-ին 208 000 հատ քանակով,
- 2021թ-ին 100 հատ գրիչ-ներարկիչներ, Գրիչ-ներարկիչների ասեղներ, 8 մմ երկարությամբ՝ 2021թ-ին 280 000 հատ քանակով,
- 2022թ-ին 130 հատ գրիչ-ներարկիչներ, Գրիչ-ներարկիչների ասեղներ, 8 մմ երկարությամբ՝ 2022թ-ին 305 000 հատ քանակով,
- 2023թ-ին 140 հատ գրիչ-ներարկիչներ, Գրիչ-ներարկիչների ասեղներ, 8 մմ երկարությամբ՝ 2023թ-ին 335 000 հատ քանակով,

3-րդ չափաբաժնի համար փամփուշտների դեպքում՝

- 2021թ-ին 1250 հատ գրիչ-ներարկիչներ, Գրիչ-ներարկիչների ասեղներ, 8 մմ երկարությամբ՝ 2021թ-ին 280 000 հատ քանակով,
- 2022թ-ին 130 հատ գրիչ-ներարկիչներ, Գրիչ-ներարկիչների ասեղներ, 8 մմ երկարությամբ՝ 2022թ-ին 305 000 հատ քանակով,
- 2023թ-ին 140 հատ գրիչ-ներարկիչներ, Գրիչ-ներարկիչների ասեղներ, 8 մմ երկարությամբ՝ 2023թ-ին 335 000 հատ քանակով,

Մատակարարը պայմանագրի շրջանակներում պարտավորվում է անվճար ապահովել և իրականացնել՝

- Շաքարային դիաբետի դպրոցի շարունակական գործունեությունը՝ ապահովելով անհրաժեշտ տպագրական նյութերով և բժիշկ-ուսուցանողի վարձատրությամբ:
- Ծրագրի բոլոր շահառուներին 6 ամիսը մեկ անգամ կապիլյար արյան մեջ գլիկոլիզացված հեմոգլոբինի որոշում:

Պայմանագրի կնքման փուլում, 2 կողմերի փոխհամաձայնեցմամբ, կքննարկվի շաքարային դիաբետով հիվանդների ռեեստրի ստեղծման հարցերը՝ պայմանագրի շրջանակներում իրականացնելու նպատակով:

Կատարված աշխատանքների վերաբերյալ եռամսյակային կտրվածքով հաշվետվությունների ներկայացում ՀՀ առողջապահության նախարարություն:

Ծրագիրը հանդիսանում է պարտադիր պայման յուրաքանչյուր չափաբաժնի կատարման համար:

Հայաստանի Հանրապետության ռեզիդենդ չհանդիսացող կազմակերպությունները պարտավոր են մատակարարումն իրականացնել ք.Երևան, Տիտոգրադյան 14/10 հասցեով ԴԻԴԻՓի ինկոտերմսի (DDP Incoterms) պահանջներին համապատասխան:

Դեղի պիտանիության ժամկետները դեղը գնորդին հանձնելու պահին պետք է լինեն հետևյալը՝

ա. 2,5 տարի և ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնելու պահին պետք է ունենան առնվազն 24 ամիս մնացորդային պիտանիության ժամկետ,

բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնելու պահին պետք է ունենան առնվազն 12 ամիս մնացորդային պիտանիության ժամկետ,

Դեղերը մատակարարելիս՝ ներկայացվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից իրականացված լաբորատոր փորձաքննության արդյունքների վերաբերյալ եզրակացություն բացառությամբ՝

ա. պատվաստանյութերի,

բ. այն դեղերի, որոնք ներմուծվել են անմիջապես գրանցման հավաստագրի իրավատիրոջից կամ նրանից պատշաճ լիազորություններ ստացած անձից և արտադրողը ունի դեղագործական տեսչությունների համագործակցության սխեմայի (PIC/S) կամ ԵԱՏՄ անդամ երկրների իրավասու մարմինների կողմից տրված պատշաճ արտադրական գործունեության հավաստագիր,

գ. այն տեղական արտադրության դեղերի, որոնց արտադրողը ունի Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից տրված պատշաճ արտադրական գործունեության հավաստագիր (ՊԱԳ), որի վերաբերյալ մատակարարը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից տրված պատշաճ արտադրական գործունեության հավաստագրի (ՊԱԳ) պատճեն:

Գնման առարկայի պահպանումը և տեղափոխումն իրականացվում է համաձայն վերջիններիս արտաքին փաթեթի կամ ներդիր-թերթիկի ցուցումների:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կարիքների համար, հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, կարող են ձեռք բերվել պետության կարիքների համար լիազոր մարմնի հատուկ թույլտվությամբ կիրառվող չգրանցված դեղեր, որոնք գրանցված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված միջազգային մասնագիտական կազմակերպություն սահմանելու մասին» N 172-Ա որոշմամբ սահմանված միջազգային մասնագիտական կազմակերպության անդամ երկրում կամ ունեն Հայաստանի Հանրապետության առողջապահության համաշխարհային կազմակերպության նախաորակավորում: Նման պարագայում մրցույթի արդյունքում առաջին տեղն զբաղեցրած մատակարարը որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի հետ միաժամանակ պարտավորվում է ներկայացնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ

բաժնետիրական ընկերության կողմից տրված հավաստող տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված միջազգային մասնագիտական կազմակերպությունների անդամ երկրում գրանցված լինելու կամ Առողջապահության համաշխարհային կազմակերպության նախաորակավորում ունենալու մասին:
Դեղերը մատակարարելիս՝ ներկայացվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից իրականացված լաբորատոր փորձաքննության արդյունքների վերաբերյալ եզրակացություն:

ԳՆՈՐԴ
Առողջապահության նախարարություն
ք. Երևան, Կառավարության շենք N 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011105237
ՀՎՀՀ 02507171

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Մ.Լ.Ն ֆարմ» ՍՊԸ
Ք.Երևան, Մ.Մաշտոցի 2, տ.39
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930000861840100
ՀՎՀՀ 02567316

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.1
«18» 08 2020թ. կնքված
«ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2020/24-1» ծածկագրով պայմանագրի

2020 ԹՎԱԿԱՆԻ
ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Ապրանքների		Նախատեսվում է գնել **2020թ.**		Գումար (ՀՀ դրամ)
	Անվանում	Չափման միավոր	30-60 օրացուցային օրերի ընթացքում, բայց ոչ ուշ քան 01.10.2020թ.	Քանակ	
1	Ուլտրակարճ ազդեցության ինսուլինների անալոգներ 100 ՄՄ/մլ 3 մլ (փամփուշտներ)	Հատ	4000	4000	19 800 000
2	Ուլտրակարճ ազդեցության ինսուլինների անալոգներ 100 ՄՄ/մլ 3 մլ (փամփուշտներ)	Հատ	16000	16000	79 200 000

ԳՆՈՐԴ
Առողջապահության նախարարություն
ք. Երևան, Կառավարության շենք N 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011105237
ՀԿՀՀ 02507171

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Մ.Լ.Ն ֆարմ» ՍՊԸ
Ք.Երևան, Մ.Մաշտոցի 2, տ.39
«Կոնվերսբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1930000861840100
ՀԿՀՀ 02567316

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.2
« 18 » 08 2020թ. կնքված
«ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2020/24-1» ծածկագրով պայմանագրի

2021 ԹՎԱԿԱՆԻ
ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Ապրանքների		Նախատեսվում է գնել **2021թ**-ին՝ համապատասխան ֆինանսական միջոցներ հատկացնելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագրի կնքման պահից				
	Անվանում	Չափման միավոր	20 օրացուցային օրերի ընթացքում՝	60 օրացուցային օր հետո 30 օրացուցային օրերի ընթացքում	150 օրացուցային օր հետո 30 օրացուցային օրերի ընթացքում	270 օրացուցային օր հետո 30 օրացուցային օրերի ընթացքում	Քանակ (նշված են առավելագույն քանակներ, որոնք ենթակա են փոփոխության՝ ելնելով տարեկան պահանջարկից)
1	Ուլտրակարճ ազդեցության ինսուլինների անալոգներ 100 ՄՄ/մլ 3 մլ (փամփուշտներ)	Հատ	2125	2125	2125	2125	8500
2	Ուլտրակարճ ազդեցության ինսուլինների անալոգներ 100 ՄՄ/մլ 3 մլ (փամփուշտներ)	Հատ	6650	6650	6650	6650	26600
		Հատ	10750	10750	10750	10750	43000
3	Երկարատև ազդեցության ինսուլինների անալոգներ 100 ՄՄ/մլ 3 մլ						

ԳՆՈՐԴ
Առողջապահության նախարարություն
ք. Երևան, Կառավարության շենք N 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011105237
ՀՎՀՀ 02507171
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Մ.Լ.Ն ֆարմ» ՍՊԸ
Ք.Երևան, Մ.Մաշտոցի 2, տ.39
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930000861840100
ՀՎՀՀ 02567316
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.3
«18» 08 2020թ. կնքված
«ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2020/24-1» ծածկագրով պայմանագրի

2022 ԹՎԱԿԱՆԻ
ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Ապրանքների		Նախատեսվում է գնել **2022թ**-ին՝ համապատասխան ֆինանսական միջոցներ հատկացնելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագրի կնքման պահից				
	Անվանում	Չափման միավոր	20 օրացուցային օրերի ընթացքում՝	60 օրացուցային օր հետո 30 օրացուցային օրերի ընթացքում	150 օրացուցային օր հետո 30 օրացուցային օրերի ընթացքում	270 օրացուցային օր հետո 30 օրացուցային օրերի ընթացքում	Քանակ (նշված են առավելագույն քանակներ, որոնք ենթակա են փոփոխության՝ ելնելով տարեկան պահանջարկից)
1	Ուլտրակարճ ազդեցության ինսուլինների անալոգներ 100 ՄՄ/մլ 3 մլ (փամփուշտներ)	Հատ	2350	2350	2350	2350	9400
2	Ուլտրակարճ ազդեցության ինսուլինների անալոգներ 100 ՄՄ/մլ 3 մլ (փամփուշտներ)	Հատ	7350	7350	7350	7350	29400
		Հատ	11575	11575	11575	11575	46300
3	Երկարատև ազդեցության ինսուլինների անալոգներ 100 ՄՄ/մլ 3 մլ						

ԳՆՈՐԴ
Առողջապահության նախարարություն
ք. Երևան, Կառավարության շենք N 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011105237
ՀՎՀՀ 02507171

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Մ.Լ.Ն ֆարմ» ՍՊԸ
Ք.Երևան, Մ.Մաշտոցի 2, տ.39
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930000861840100
ՀՎՀՀ 02567316

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.4
«18» 08 2020թ. կնքված
«ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2020/24-1» ծածկագրով պայմանագրի

2023 ԹՎԱԿԱՆԻ
ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Ապրանքների		Նախատեսվում է գնել **2023թ**-ին՝ համապատասխան ֆինանսական միջոցներ հատկացնելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագրի կնքման պահից				
	Անվանում	Չափման միավոր	20 օրացուցային օրերի ընթացքում՝	60 օրացուցային օր հետո 30 օրացուցային օրերի ընթացքում	150 օրացուցային օր հետո 30 օրացուցային օրերի ընթացքում	270 օրացուցային օր հետո 30 օրացուցային օրերի ընթացքում	Քանակ (նշված են առավելագույն քանակներ, որոնք ենթակա են փոփոխության՝ ելնելով տարեկան պահանջարկից)
1	Ուլտրակարճ ազդեցության ինսուլինների անալոգներ 100 ՄՄ/մլ 3 մլ (փամփուշտներ)	Հատ	2600	2600	2600	2600	10400
2	Ուլտրակարճ ազդեցության ինսուլինների անալոգներ 100 ՄՄ/մլ 3 մլ (փամփուշտներ)	Հատ	7850	7850	7850	7850	31400
		Հատ	12550	12550	12550	12550	50200
3	Երկարատև ազդեցության ինսուլինների անալոգներ 100 ՄՄ/մլ 3 մլ						

ԳՆՈՐԴ
Առողջապահության նախարարություն
ք. Երևան, Կառավարության շենք N 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011105237
ՀՎՀՀ 02507171
_____
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Մ.Լ.Ն ֆարմ» ՍՊԸ
Ք.Երևան, Մ.Մաշտոցի 2, տ.39
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930000861840100
ՀՎՀՀ 02567316
_____
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«18» 08 2020թ. կնքված
«ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2020/24-1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի														
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
Հ/Հ	միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	33611310/504	Ուլտրակարճ ազդեցության ինսուլինների անալոգներ 100 ՄՄ/մլ 3 մլ (փամփուշտներ)										19 800 000	19 800 000	19 800 000	19 800 000
2	33611310/505	Ուլտրակարճ ազդեցության ինսուլինների անալոգներ 100 ՄՄ/մլ 3 մլ (փամփուշտներ)										79 200 000	79 200 000	79 200 000	79 200 000
Ընդամենը												**99 000 000**	**99 000 000**	**99 000 000**	**99 000 000**

ԳՆՈՐԴ
Առողջապահության նախարարություն
ք. Երևան, Կառավարության շենք N 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011105237
ՀՎՀՀ 02507171

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Մ.Լ.Ն ֆարմ» ՍՊԸ
Ք.Երևան, Մ.Մաշտոցի 2, տ.39
«Կոնվերսբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1930000861840100
ՀՎՀՀ 02567316

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«18» 08 2020թ. կնքված
«ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2020/24-1» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«18» 08 2020թ. կնքված
«ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2020/24-1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «Մ.Լ.Ն ՖԱՐՄ» ՍՊԸ-Ի ՄԻՋԵՎ 18.08.20թ. ԿՆՔՎԱԾ «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2020/24-1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «26» «Դեկտեմբեր» 2021թ.

1. Առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ Գնորդ), ի դեմս գլխավոր քարտուղարի պատրտականությունները կատարող Վ.Գրիգորյանի մի կողմից, և «Մ.Ն.Լ Ֆարմ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Վաճառող), ի դեմս տնօրեն Հ.Վասիլյանի, մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով 18.08.20թ. կնքված «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2020/24-1» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետը կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1.1 Պայմանագրի Հավելված 1.2-ում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն Համաձայնագրի Հավելված 1-ի:

1.2 Պայմանագրի Հավելված 2-ը լրացնել նոր Հավելված 2.1-ով՝ համաձայն սույն Համաձայնագրի Հավելված 2-ի:

2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:

3. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

4. Համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Առողջապահության նախարարություն	«Մ.Լ.Ն ֆարմ» ՍՊԸ
Կառավարական տուն 3	Ք.Երևան, Մ.Մաշտոցի 2, տ.39
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011105237	Հ/Հ 1930000861840100
ՀՎՀՀ 02507171	ՀՎՀՀ 02567316
----------	----------
ստորագրություն/ Կ.Տ	ստորագրություն/ Կ.Տ